15149

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան
«16» 11 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0204-23

Ձեռնարկողը՝ ***«Մայլեռ Մաունթայն Ռեզորթ» ՓԲԸ***
Քաղաք Երևան, Սևանի 86/2

Գործունեությունը՝ ***Ապարան խոշորացված համայնքի Եղիպատրուշ, Շողակն բնակավայրերի վարչական տարածքում նախատեսվող լեռնադահուկային համալիրում ճոպանուղիների, հյուրանոցային և ռեստորանային հանգույցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ եզրակացությունը 7 թերթ:

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0204-23

«16» Նոյեմբերի **2023թ.**

Արագածոտնի մարզի Ապարան խոշորացված համայնքի Եղիպատրուշ, Շողակն բնակավայրերի վարչական տարածքում նախատեսվող լեռնադահուկային համալիրում ճոպանուղիների, հյուրանոցային և ռեստորանային հանգույցի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Մայլեռ Մաունթայն Ռեզորթ» ՓԲԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Արագածոտնի մարզ, Եղիպատրուշ, Շողակն բնակավայրեր

Ներածական մաս. «Մայլեռ Մաունթայն Ռեզորթ» ընկերությունը նախատեսում է իրականացնել ճոպանուղիների, հյուրանոցային և ռեստորանային հանգույցի կառուցման աշխատանքներ Արագածոտնի մարզի Ապարան խոշորացված համայնքի Եղիպատրուշ, Շողակն բնակավայրերի վարչական տարածքներում: 0.368հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը սեփականություն:

5 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը, բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» << օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 8)-րդ կետի ա. ենթակետի համաձայն, նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործնեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող լեռնային տուրիստական համալիրի կառուցման ծրագրի շրջանակում դիտարկվում է «Էնջըլայն» Lift 1A և Lift 1B նոր DLine մոնտաժման աշխատանքի

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

10-տեղանի գոնդոլային ճոպանուղիներ՝ 2800 մարդ/ժամ արտադրողականությամբ, և «Նարե» 6-տեղանի բազկաթոռային ճոպանուղին՝ 2200 մարդ/ժամ արտադրողականությամբ:

Ծրագրի շրջանակում կառուցվելու են դահուկուղիներ և ճոպանուղիներ շուրջ 12 հա շրջագծային կոնտուրով տարածքում:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել 02.11.2022թ. տրված №90 և 27.03.2023թ. տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքները:

2021 թվականի հուլիսի 29-ի Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում լեռնային հանգստավայրի կառուցման «Մայլեռ» ներդրումային ծրագրին հավանություն տալու մասին որոշումը:

2021 թվականի հոկտեմբերի 7-ի Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքում գտնվող որոշ տարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին N1661-Ա որոշումը:

Սույն ծրագրով 360 օր շահագործում է ապահովվելու:

Հիմնական կայանը կառուցվելու է 0.3682 հա մակերեսով տարածքի վրա:

Կառուցապատման մակերեսը կկազմի 1032 քմ, ջրանցիկ մակերեսը 2650 քմ:

Կայանի, ռեստորանի և հյուրանոցի հողատարածքի մակերեսը կկազմի 5 հա, կառուցապատման մակերեսը՝ 2010քմ, անջրանցիկ մակերեսը 8000 քմ, ջրանցիկ մակերեսը 39990 քմ: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 16,0 ամիս:

Ճոպանուղու կայանը գտնվելու է Արագածոտնի մարզի, Ապարան խոշորացված համայնքում և իրենից ներկայացնելու է երկու սյուների վրա հենված կառույց, հարթակ որտեղից իրականացվելու է մարդկանց նստեցումն ու իջեցումը: Տարածքում նախատեսվում են նաև առանձին կառույցներ, որոնք կիրառվելու են կայանի և ճոպանուղու կառավարման համար: Կայանների չափերն են՝ առաջինը 20մx16մ, իսկ երկրորդը 22մx10մ: Դրանք ընդհանուր մեկ ծածկով կառույցներ են, որոնք վիզուալ ընկալվելու են որպես մեկ միասնական կառույց: Ճոպանուղու գոնդոլային նստարանների կայանատեղիի երկարությունը կազմում է 42,2 մ, լայնությունը 32,4 մ: Կառուցապատման մակերեսը 0-ական նիշում կազմում է 1032 քմ, որն իրականացվելու է սեփական հողատարածքի սահմաններում: Նախատեսվող գործունեության շրջանակում իրականացվելու է հիմնական կայանի կառուցում (շուրջ 0.3682 հա):

Լեռնադահուկային հանգստավայրը կներառի 17 ճոպանուղի՝ ժամում 41,400 մարդ ընդհանուր թողունակությամբ, որոնք կկարողանան սպասարկել միաժամանակ 17,000 դահուկորդների:

Հյուրանոցային համալիրն ու ռեստորանային հանգույցը գտնվելու են Արագածոտնի մարզի Ապարան խոշորացված համայնքի տարածքում: Հանգույցն իրենից ներկայացնելու է երկհարկանի կառույց նկուղային հարկով: Նկուղային հարկում լինելու են սպասարկման և խոհանոցային գոտիները: Առաջին հարկում կլինեն ռեստորանի սրահն ու օժանդակ այլ տարածքները: Հողատարածքի մակերեսը կկազմի 5 հա, կառուցապատման մակերեսը 2010քմ:

«Էնջըլայն Lift 1A» ճոպանուղու ուղու բարձրությունը ներքևի կայանում 1.955,5 մ է, վերևի կայանում 2.112 մ: Բարձրությունների ակնումը կկազմի 156,5 մ, հորիզոնական երկարությունը 1.198,69 մ: Ճոպանուղու լայնությունը՝ 6.4 մ է, հենարանների քանակը՝ 6, ճոպանի տրամագիծը՝ 54 մմ, ճոպանի հանգույցի/ծխնու երկարությունը՝ 2.494,39 մ:

«Էնջըլայն Lift 1B» ճոպանուղու ուղու բարձրությունը ներքևի կայանում կկազմի 2.112,00մ, վերևի կայանում՝ 2.825,00 մ, բարձրությունների ակնումը 713,00 մ, հորիզոնական երկարությունը 2.518,97 մ: Ճոպանուղու լայնությունը՝ 6.4 մ է, հենարանների քանակը՝ 15 հատ, ճոպանի տրամագիծը՝ 54 մմ, ճոպանի հանգույցի/ծխնու երկարությունը՝ 5.340,71 մ:

«Նարե» ճոպանուղու ուղու բարձրությունը, ներքևի կայանում կկազմի 2.015մ, վերևի կայանում՝ 2.416 մ, բարձրությունների ակնումը 401 մ, հորիզոնական երկարությունը կկազմի 2050 մ: Ճոպանուղու լայնությունը՝ 6.4մ է հենարանների քանակը՝ 15 հատ, ճոպանի տրամագիծը՝ 47մմ, ճոպանի հանգույցի/ծխնու երկարությունը՝ 4.258,25մ: Թեքությունն ի վեր վերջնական արտադրողականությունը՝ 2200մարդ/ժամ: Թեքությունն ի վար արտադրողականությունը՝ 0%: Բազկաթոռների քանակը՝ 91, բազկաթոռների միջև հեռավորությունը՝ 48.94մ, ժամանակային միջակայքը՝ 9.8վ:

Լեռնադահուկային համալիրը բաղկացած է լինելու 19 սահուղիներից:

Կայանատեղին նախատեսված է՝

-«Էնջըլայն Lift 1A » ճոպանուղի՝ 43 հատ խցիկի համար, 1 հատ տեխնոլոգիական կախոցի համար

-«Էնջըլայն Lift 1B» ճոպանուղի՝ 78 հատ խցիկի համար, 1 հատ տեխնոլոգիական կախոցի համար

-«Նարե» ճոպանուղի՝ 91 հատ բազկաթոռի համար, 1 հատ տեխնոլոգիական կախոցի համար:

Նստեցման (посадка) համար փոխակրիչ(«Նարե» ճոպանուղի):

«Էնջըլայն» ճոպանուղու տրամագիծը 54մմ է, ամրությունը 1770Ն/մմ², երկարությունը 2.590մ:

«Նարե» ճոպանուղու տրամագիծը 47մմ է, ամրությունը 1960Ն/մմ2, երկարությունը 4.345մ:

Ադապտիվ ամորտիզացիայի արտոնագրված համակարգն ապահովում է հարմարավետության առավելագույն մակարդակ խցիկի ուղով երթևեկության ընթացքում:

Հենարանների վրա լուսարձակների էլեկտրասնումն իրականացվում է ուժային մալուխների միջոցով, որոնք սնուցվում են մարտկոցային պահարանից:

Քամու արագության և ուղղության գրանցումն իրականացվում է հողմաչափերով:

Կայանների բոլոր զգայուն էլեկտրատեխնիկական սարքավորումները պաշտպանված են շանթապաշտպան բաղադրիչների միջոցով:

Ստորգետնյա ջրերը գտնվում են 9մ-12մ խորության վրա: Գարնանային և աշնանային ժամանակաշրջանում կարող են ավելի բարձր նիշերի վրա գտնվել:

Հողի բերրի շերտի միջին հզորությունը կազմում է 0.2 մ:

Ըստ ներկայացված հայտի, նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում են ծառահատումներ: Անտառային տարածքների համար վնասի փոխհատուցումը կիրականացվի օրենքով սահմանված կարգով, վնասի փոխհատուցման պայմանագրերի համաձայն: Տարածքում անտառների հետ իրավահարաբերությունները և պլանավորվող միջոցառումներն իրականացվելու են համաձայն նախաձեռնողի և «Հայանտառ» ՊՈԱԿ -ի միջև կնքված պայմանագրի:

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով:

Շաղախը և բետոնը կառաքվեն Ապարան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով: Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումն ու յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում:

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար:

Շինարարության փուլում ջրցանման համար անհրաժեշտ ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, Ապարան քաղաքի ոռոգման ջրի ցանցից, աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն մատակարար կազմակերպության հետ կնքած պայմանագրի:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է 2.24 տ և շինարարական աղբն է 150 տ: Շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակների հանդիպման դեպքում՝ գործընթացները կկազմակերպվեն համաձայն կառավարության 2014 թվականի հուլիսի 14-ի N781-Ն որոշման:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան:
- Պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում:
- Շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով:
- Սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:
-Ջրցանի ծավալները հաշվարկվել են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար:
-Անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 75խմ ծավալով տարողություն, որի ծավալն ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն մոտ 4000քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում ամենամեծ

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:
-Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա:
- Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի մաքրում աղբից, կեղտոտված բնահողից, վառելիքաքսուկային նյութերից: Շինարարական աղբը և մնացած թափոնները տեղափոխվելու են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված աղբավայրեր: Այդ նպատակով մինչև գործունեության սկսելը համայնքապետարանին կներկայացվի համապատասխան հայտ, կհամաձայնեցվի աղբի և ավելացած գրունտի տեղափոխման վայրերը:
-Անհրաժեշտ է բացառել տարածքում այն ծառերի և թփերի հատումը, որոնք նախագծի համաձայն ազդեցության չեն ենթարկվում:
-Տեխնիկատրանսպորտային միջոցները վարել բացառապես գոյություն ունեցող ճանապարհներով, անհրաժեշտության դեպքում բարելավել այն:
-Ճանապարհներին և այլ տեղամասերում, հատկապես չոր եղանակին, մշտապես կիրառել ջրցան մեքենաներ փոշենստեցման համար:
Շինարարական աշխատանքների ժամանակ՝
ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից:
Շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 1540000 ՀՀ դրամ:
Աշխատանքների ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.
-Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ հաճախականությամբ:
-Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2-3 անգամ:
-Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
-Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
-Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, Արագածոտնի մարզի Ապարան խոշորացված համայնքի Եղիպատրուշ, Շողակն բնակավայրերի վարչական տարածքում նախատեսվող լեռնադահուկային համալիրում ճոպանուղիների, հյուրանոցային և ռեստորանային հանգույցի կառուցման աշխատանքների վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետարանում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հայտնեցին իրենց

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն և Արագածոտնի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

-Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
-Հողային աշխատանքները պետք է իրականացվեն միայն հնագետի հսկողությամբ (հողային աշխատանքները սկսելուց առաջ նախարարությանը տրամադրել հսկողություն իրականացնող հնագետի տվյալները):
-Աշխատանքներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն՝ պահպանելով շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:
-Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշման 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:
-Անհրաժեշտ է իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:
-Անհրաժեշտ են զբոսաշրջային արահետների, զբոսաշրջանային ավանի և կառուցվող ճոպանուղու կայանների հարևանությամբ տեղադրել տեղեկատվական վահանակներ՝ պահպանության կարիք ունեցող բուսատեսակների մասին տեղեկատվությամբ:
-Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առանձնացնել տվյալ պահպանվող գոտին:
-Կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնադրման և թխսման ժամանակամիջոցում հնարավորինս նվազեցնել տեխնիկական միջոցների կիրառմամբ աշխատանքները:
- Աշխատանքների իրականացման ժամանակ՝ ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Մայլեռ Մաունթայն Ռեզորթ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Ապարան խոշորացված համայնքի Եղիպատրուշ, Շողակն բնակավայրերի վարչական տարածքում նախատեսվող լեռնադահուկային համալիրում ճոպանուղիների, հյուրանոցային և ռեստորանային հանգույցի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան